

մարուած է Հայոց մէջ, եւ 1867 ին³⁰ շինուած եւ օրհնուած է: Սուչավայի ժողովրդապետներէն մին այս եկեղեցւոյ մէջ տարին 5 անգամ պատարագ կը մատուցանէ, այն է 1. Ս. Գէորգայ տօնին, 2. Անմիջապէս Զատիկէն եւ 3. Ծննդէնէն ետեւ. 4. Համբարձման եւ 5. Աւետման: Աւերջին երկու տօներն են ի յիշատակ Տիմարկութեան Պարոն քաբրիի տան որ ի Նեկուսդինա:

Սուչավայի արեւելեան Հայք տարին երկու անգամ՝ Եկեղեցւոյ նաւակատեաց տօն կը կատարեն, այն է՝ Ս. Յակոբայ օրն ի 29 Գեկտ. եւ ի տօնին Ննչման Ս. Կուսի (Աւերաիփսումն), Օգոստոսի 12 ին եւ 18 ին մէջ:

Հայք ունին 12 անգամէ բաղկացեալ եկեղեցական Հոգաբարձութիւն մը, որ ազգէն կ'ընտրուի 3 տարւոյ համար³¹, որոնցմէ 5 անգամ գլխաւոր յանձնաժողովը կը կազմեն, իսկ միւս 7 անգամն երկրորդական յանձնաժողովը, որոնց կանոնագրութիւնը 1872 էն ի վեր Բարձրագոյն իշխանութենէ հաստատուած է:

Եկեղեցական Հոգաբարձութեան գործն է ընչից մատակարարութեան մէջ կարգաւորութիւն պահել եւ ամէն տեղ եկեղեցւոյ շահուն պաշտպան ըլլալ, հսկել ուսուցչաց վրայ՝ որոնք նաեւ եկեղեցւոյ երգեցիկքն են. ունի իրաւունք քահանայն պաշտօնէն կախելու, քահանայացու առաջարկելու ժողովրդեան՝ յընտրութիւն, եւ ընտրեալը առաջարկելու եպիսկոպոսին ի ձեռնադրութիւն: Հոգաբարձութիւնը պարտական է